04.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 112-Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՒՌՆՈՒԽ ԵՎ ՈՐՈՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԿԱՄ ԱՅԴ ՀԱՍՑԵՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ՆՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՅԼ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված, սակայն նույն բնակավայրի այլ հասցեում հաշվառված քաղաքացիներին (այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաներին) միանվագ և ամսական դրամական աջակցություն վճարելուն առնչվող հարաբերությունները:

2. Միանվագ և ամսական դրամական աջակցությունը վճարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանից (այսուհետ՝ մարզպետարան) ստացված՝ շահառուների տվյալների (այսուհետ՝ շահառուների ցանկ) հիման վրա:

3. Շահառուների ցանկում ներառվում են՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերի հաշվառում ունեցող և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակված անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողի (խնամակալի) անվամբ բացված բանկային հաշվի համարը.

2) եթե սույն կետի 1-ին ենթակետում նշված անձն անչափահաս է, ապա երեխայի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե ծնողը կամ խնամակալը հրաժարվել է երեխայի

հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց), երեխայի ծնողներից մեկի (կամ խնամակալի, եթե երեխայի նկատմամբ սահմանվել է խնամակալություն) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և բանկային հաշվի համարը:

4. Մարզպետարանը շահառուների ցանկը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով տրամադրում է նախարարությանը:

5. Նախարարությունը շահառուների ցանկում նշված տվյալները համեմատում է (համադրում է) բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրացման վերաբերյալ տվյալների հետ:

6. Եթե շահառուի՝ շահառուների ցանկում նշված տվյալները հավաստի չեն (ներկայացված տվյալները չեն համապատասխանում բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին), կամ շահառուն մահացել է, ապա նախարարությունը շահառուի տվյալները չի ներառում վճարման ցուցակ և վճարման ցուցակ ձևավորելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է մարզպետարանին:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված տվյալները ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մարզպետարանը ներկայացնում է ճշտված տվյալներ, որոնց հիման վրա դրամական օգնության գումարը վճարվում է սույն կարգով սահմանված կարգով:

8. Դրամական օգնության գումարը վճարվում է անկանխիկ եղանակով՝ շահառուի (անչափահաս երեխայի դեպքում՝ ծնողի կամ խնամակալի) բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

9. Նախարարությունը, հիմք ընդունելով սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները, շահառուների ցանկը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է վճարման ցուցակ և ոչ ուշ, քան ձևավորվելու հաջորդ օրը դրամական օգնության գումարը փոխանցում է շահառուների (անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողի (խնամակալի) բանկային հաշիվներին:

10. Վճարման ցուցակում ներառվում են շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողի (խնամակալի) և շահառուի) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, վճարման ենթակա գումարը և բանկային հաշվի համարը:

11. Ամենամսյա դրամական աջակցությունը վճարվում է (փոխանցվում է շահառուների բանկային հաշիվներին) մինչև տվյալ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

12. Դրամական օգնության գումարը շահառուի բանկային հաշվին փոխանցելու օրվան հաջորդող օրը նախարարությունը դրա մասին հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնում է շահառուներին (անչափահաս շահառուի դեպքում՝ նրա ծնողին կամ խնամակալին):

13. Դրամական օգնության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

14. Դրամական օգնության գումարը ընտանիքի անապահովությունը գնահատելիս ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չի մտնում, ինչպես նաև եկամտային հարկով հարկման բազայում չի ներառվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ